ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ՄԱԾՁԲ-18/92

ք.Երևան

«10» հոկտեմբեր 2018թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ.Զաթրյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Քանան քոնսթրաքշն» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Նաիրա Հակոբյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է մշակութային միջոցառումների ծառայությունների ձեռքբերման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1), ինչպես նաև՝ մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները: Ընդ որում Պատվիրատուն Կատարողին է տրամադրում պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ բացասական եզրակացությունը և չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 15 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ դրական եզրակացությունը կամ Ծառայությունը չընդունելու դեպքում՝ սույն պայմանագրի 3.2-րդ կետի «ա)» ենթակետում նշված փաստաթղթերը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 43330000 (քառասուներեք միլիոն երեք հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Երևանի քաղաքապետարան	«Քանան քոնսթրաքշն» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտիի փ. 1	Հասցե՝ ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Աշնակ
Կենտրոնական գանձապետարան	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900012410537	Հ/Հ 2050422233751001
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 05305792
Գ. Չթրյան _____	Ն. Հակոբյան _____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«10» հոկտեմբեր 2018թ կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-18/92
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության տեխնիկական բնութագիրը	Հ/Մ	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	79951110/275	Երևանի հիմնադրման 2800 ամյակին նվիրված տոնակատարությանը նվիրված /Ազատության հրապարակ/«Ազգային երգ ու պար» Ազատության հրապարակում ժ. 15:00 ից մինչև 21:00 և անհրաժեշտ է կազմակերպել համերգային ծրագիր ազգագրական երգի. պարի. ժողովրդական գործիքների համույթների և անհատ կատարողների մասնակցությամբ: Ծրագիրը հանդիսավարելու նպատակով ապահովել հանդիսավար կամ հանդիսավարներ. ապահովելով հաղորդավարական սցենարը: Համերգային ծրագրին զուգընթաց անհրաժեշտ է կազմակերպել հայկական կիրառական արվեստի բացօթյա ցուցադրություն. ազգային ծեսերի երաժշտաթատերական հանդիսություններ: Ծրագրի խորագրին համահունչ անհրաժեշտ է մշակել՝ հավաքագրել. մոնտաժել և համերգին զուգընթաց հարթակի ետնամասում մոնտաժված ԼԵԴ էկրանին հեռարձակել տեսանյութեր: Ըստ անհրաժեշտության և համերգային ծրագրի մասնակիցների պահանջի ապահովել երաժշտական գործիքներով: Ծրագրի իրականացման համար ապահովել հետևյալ տեխնիկական միջոցները. Ծրագրի մեկնարկից 4 օր առաջ պատվիրատուին ներկայացնել և համաձայնեցնել բեմահարթակի 2D տարբերակը ըստ տեխնիկական հագեցվածության:Ապահովել 3 ֆազ հոսանքով շուրջ 70 կիլովատ. իր մալուխներով: Ձայնային սարքավորումներ 40 կվտ. 120 ժե ձայնային ճնշումով որակյալ թվային ղեկավարման վահանակով. որը կապահովի 48 մուտք 24 ելք: Պետք է ապահովել կենդանի ձայնով երգերի և երաժշտական գործիքների կատարման համար անհրաժեշտ սարքավորումներ. Լուսային սարքավորումներ 80 միավոր. Բեմական հարթակի պաստառների տպագրություն ինչպես նաև պաստառապատում.	ծառայություն	**16590000**	1	Ք. Երևան	մինչև 2018թ.հոկտեմբերի 22-ը

		Բեմական ալյումինե կոնստրուկցիաներ՝ 10x8 մետր չափսերով, Բեմահարթակ՝ 80 ք/մ մակերեսով: Ալյումինե կոնստրուկցիա, ծածկով, 10 մ. լայնությամբ x 8մ. խորությամբ x 7,5մ. բարձրությամբ, Ալյումինե կոնստրուկցիա՝ 3մ 10 հատ, Բեմահարթակ՝ 10մ. լայնությամբ x 8մ խորությամբ x 1մ. բարձրության, Շարժող լուսատու սարք ԼԵԴ 37 անգամ 10Վտ հզորությամբ՝ 22 հատ, Շարժող լուսատու սարք ԲԻՄ մետալոհալոգեն 330Վտ հզորությամբ՝ 22 հատ, Լուսատու սարք Blinder 2 light հալոգեն լամպով 1300Վտ՝ 16 հատ, Լուսատու սարք LED BAR 14x30 Վտ հզորությամբ՝ 20 հատ, Թեթև ծխի հեղուկ ջրային հիմքով, Antari hazer 350, Լույսերի կառավարման վահանակ Avolites tiger touch կամ համարժեք, ԼԵԴ էկրան 7մ x 4մ, 5մմ քայլերի խտությամբ, նախատեսված դրսի պայմաններում աշխատելու համար: Կոմուտացիա համարժեք: Գովազդային հոլովակի պատրաստում 30 վարկյան տևողությամբ: Կոմուտացիա համարժեք: Մասնակիցների ցանկը, գեղարվեստական մասի ծրագրերը և սցենարները անհրաժեշտ է նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ:					
2	79951110/276	Երևանի հիմնադրման 2800 ամյակին նվիրված տոնակատարությանը նվիրված ՋԱՋ հարթակ-«Երևան սիրո քաղաք /Կասկադ համալիրի տարածք/ Կասկադ համալիրի տարածքում ժամը 16:00-ից մինչև 21:00-ն անհրաժեշտ է կազմակերպել կենդանի նվագակցությամբ համերգային ծրագիր՝ Հայաստանյան հայտնի ջազային երգիչ երգչուհիների , խմբերի, նվագախմբերի մասնակցությամբ: Համերգային ծրագիրը վարելու նպատակով անհարժեշտ է ապահովել հաղորդավարի և հաղորդավարուհու մասնակցությունը: Ապահովել հանդիսավարների սցենարը, նախապես համաձայնեցնելով պատվիրատուի հետ: Ծրագրի խորագրին համահունչ անհրաժեշտ է մշակել՝ հավաքագրել, մոնտաժել և համերգին զուգընթաց հարթակի ետնամասում մոնտաժված ԼԵԴ էկրանին հեռարձակել տեսանյութեր: Ըստ անհրաժեշտության և համերգային ծրագրի մասնակիցների պահանջի ապահովել երաժշտական գործիքներով: Նշված ծրագրի իրականացման համար ապահովել հետևյալ տեխնիկական միջոցները: Գովազդային հոլովակի պատրաստում 30 վարկյան տևողությամբ: Ներկայացնել բեմահարթակի նախորոք պլանավորված 2D պլան որում ներառված կլինեն բոլոր տեխնիկական միջոցները, որը օգտագործվելու է տվյալ հարթակում: Ձայնային սարքավորումներ 35 կվտ. 110ժե ձայնային ճնշումով, որոակյալ թվային ղեկավարման վահանակով որը կունենա առնվազն 48 մուտք և 24 ելք: Ապահովել կենդանի ձայնով երգերի և երաժշտական գործիքների կատարման համար անհրաժեշտ սարքավորումներ:	ծառայություն	**14840000**	1	Ք. Երևան	մինչև 2018թ.հոկտեմբերի 22-ը

		Լուսային սարքավորումներ 78 միավոր. Բեմական հարթակի պաստառների պատրաստում, տպագրում և պաստառապատում. Բեմահարթակ 80 բ/մ մակերեսով: Ալյումինե կոնստրուկցիա, ծածկով, չափսերը 11մ. լայնությամբ x 8մ. խորությամբ x 7մ. բարձրությամբ. Բեմահարթակ տելեսկոպ ոտքերով, Ընդհանուր չափսը՝ 10մ. լայնությամբ x 8մ. խորությամբ x 1մ. բարձրությամբ. Շարժող լուսատու սարք ԼԵԴ 19 անգամ 15 Վտ հզորությամբ՝ 16 հատ. Շարժող լուսատու սարք ԲԻՄ 16R 330 Վտ հզորությամբ՝ 16 հատ. Շարժող լուսատու սարքSpot 20 R 4 – 50 աստիճան բացվածք 440 Վտ հզորությամբ՝ 14 հատ. Լուսատու սարք ԼԵԴ 7 անգամ 20 Վտ հզորությամբ՝ 32 հատ. ԼԵԴ էկրաններ 5.5 մետր լայնությամբ և 3 մետր բարձրության, 5մմ բայլերի խտությամբ, նախատեսված դրսի պայմաններում աշխատելու համար: Ինչպես նաև պատրաստել ջազային երգիչ երաժիշտներին վերաբերվող տեսանյութեր ջազի խրոնիկա, պատմություններ և այլն:Ապահովել համապատասխան սարքաորումներ էկրանների վրա թողարկման համար իր մասնագետով: Լուսային կառավարման վահանակ Avolites Titan Mobile կամ համարժեք: Կոմուտացիա համարժեք: Մասնակիցների ցանկը, գեղարվեստական մասի ծրագրերը և սցենարները անհրաժեշտ է նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ:					
3	79951110/277	Երևանի հիմնադրման 2800 ամյակին նվիրված տոնակատարությանը նվիրված՝ Ռոք համերգ – Շաղ Ազնավուրի հրապարակի տարածքում ժ. 17:00-ից մինչև 22:00-ն կազմակերպել համերգային ծրագիր հայաստանյան հայտնի ռոք խմբերի մասնակցությամբ: Համերգային ծրագիրը վարելու նպատակով անհարժեշտ է ապահովել հաղորդավարի և հաղորդավարուհու մասնակցությունը: Ապահովել համերգային ծրագրի և հանդիսավարների սցենարը, նախապես համաձայնեցնելով պատվիրատուի հետ: Գովազդային հոլովակի պատրաստում 30 վարկյան տևողությամբ: Ծրագրի խորագրին համահունչ անհրաժեշտ է մշակել՝ հավաքագրել, մոնտաժել և համերգին զուգընթաց հարթակի ետնամասում մոնտաժված ԼԵԴ էկրանին հեռարձակել տեսանյութեր: Ըստ անհրաժեշտության և համերգային ծրագրի մասնակիցների պահանջի ապահովել երաժշտական գործիքներով: Նշված ծրագրի իրականացման համար ապահովել հետևյալ տեխնիկական միջոցները. Ձայնային սարքավորումներ 35 կվտ. 115ժ ձայնի ճնշումով: Ապահովել կենդանի ձայնով երգերի և երաժշտական գործիքների կատարման համար անհրաժեշտ սարքավորումներ. Լուսային սարքավորումներ առնվազն 76 միավոր.	ծառայություն	***11900000***	1	Ք. Երևան	մինչև 2018թ.հոկտեմբերի 22-ը

		Բեմական հարթակի պատուռների պատրաստում, տպագրում և պատուռապատում Բեմահարթակ 80 գ/մ մակերեսով: Ալյումինե կոնստրուկցիա, ծածկով, 10մ. լայնությամբ x 8մ. խորությամբ x 7մ. բարձրությամբ, Ալյումինե կոնստրուկցիա՝ 3մ 10 հատ, Բեմահարթակ 9մ. լայնությամբ x 8մ. խորությամբ x 1մ. բարձրությամբ, Շարժող լուսատու սարք ԼԵԴ 37 անգամ 10Վտ հզորությամբ՝ 22 հատ, Շարժող լուսատու սարք ԲԻՄ մետալոհալոգեն 330Վտ հզորությամբ՝ 22 հատ, Լուսատու սարք Blinder 2 light հալոգեն լամպով 1300Վտ հզորությամբ՝ 16 հատ, Լուսատու սարք LED BAR 14x30 Վտ հզորությամբ՝ 16 հատ, Թեթև ծխի հեղուկ ջրային հիմքով, Antari hazer 350, Լույսերի կառավարման վահանակ Avolites tiger touch կամ համարժեք, ԼԵԴ էկրան 7 մետր x 4 մետր չափսերով, 5մմ քայլերի խտությամբ նախատեսված դրսի պայմաններում աշխատելու համար: Կոմուտացիա համարժեք: Մասնակիցների ցանկը, գեղարվեստական մասի ծրագրերը և սցենարները անհրաժեշտ է նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ:					
		Ընդանուր		***43330000***	3		

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410537
ՀՎՀՀ 02593108

Գ. Չթրյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Քանան քոնսթրաքշն» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Աշնակ
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050422233751001
ՀՎՀՀ 05305792

Ն. Հակոբյան

(ստորագրություն)
Construction
05305792

Հավելված N 2
«10» հոկտեմբեր 2018թ. կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-18/97
ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**										
			մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	79951110 /275	Երևանի հիմնադրման 2800 ամյակին նվիրված տոնակատարությանը նվիրված /Ազատության հրապարակ/«Ազգային երգ ու պար»	------	------	------	------	------	------	------	16590000	16590000	16590000	**16590000**
2	79951110 /276	Երևանի հիմնադրման 2800 ամյակին նվիրված տոնակատարությանը նվիրված ՋԱՑ հաթթակ-«Երևան սիրո քաղաք /Գասկաղ հռոմալիրի տարածք/	------	------	------	------	------	------	------	14840000	14840000	14840000	**14840000**
3	79951110 /277	Երևանի հիմնադրման 2800 ամյակին նվիրված տոնակատարությանը նվիրված՝ Ռոք համերգ - Շատ Ազատության հրապարակի	------	------	------	------	------	------	------	11900000	11900000	11900000	**11900000**
		Ընդանուր	------	------	------	------	------	------	------	43330000	43330000	43330000	**43330000**

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410537
ՀՎՀՀ 02593108

Գ. Չթրյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Քանան քոնսթրաքշն» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Աշնակ
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050422233751001
ՀՎՀՀ 05305792

Ն. Հակոբյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
«10» հոկտեմբեր 2018թ կնքված N ԵՔ ՄԱԾՁԲ-18/92
ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«10» հոկտեմբեր 2018թ կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-18/92
ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան *«10» հոկտեմբեր 2018թ.*

«Քանան քոնսթրաքշն» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Նաիրա Հակոբյանի (AG 0325475 տրված 07.07.2004թ. 012-ի կողմից), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ *ԵՔ ՄԱԾՁԲ-18/92* ծածկագրով գնման ընթացակարգին:

1.1 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.2 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.4 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.5 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում:

1.6 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.7 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է «ԱԲՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ» ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև 02.11.2018թ ներառյալ (Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան, իսկ պայմանագրով երաշխիքային ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ երաշխիքային ժամկետի ավարտին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ):

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Քանան քոնսթրաքշն» ՍՊԸ
Հասցե՝ << Արագածոտն [illegible] Աշնակ
«Ինեկոբանկ» [illegible]
<< 20500[illegible]
<< 05305792

Ն. Հակոբյան

10.10.2018 թ.

1.	ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ
2. Թիվ	
3.Ներկայացման ամսաթիվը՝ «___» «___» 20___թ.	
4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն) ՝ «Քանան քոնսթրաքշն» ՍՊԸ	
5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ) ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ	
6. Վճարողի հաշվի համարը՝ 2050422233751001	
7. Վճարողի ՀԿՀՀ՝ 05305792	
8. Վճարողի ՀԾՀ՝	
9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ Երևանի քաղաքապետարան	
10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)	
11. Շահառուի ՀԿՀՀ՝ 02593108	
12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Կենտրոնական գանձապետարան	
13.Շահառուի հաշվի համարը (h2.N)՝ 900012511429	
14.Գումարը (թվերով և բառերով)՝ 4333000 (չորս միլիոն երեք հարյուր երրեսուներեք հազար)	
15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)	
16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD	
17.Գործարքի (վճարման) նպատակը՝ պայմանագրի կատարման ապահովման համար	
18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ *ԵՔ-ՄԱԾՁԲ-18/92*	
19. Վճարման պայմանները՝ ակցեպտավորված վճարում	
20. Առդիր էջերի քանակը՝ ___ էջ	
22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ 21.բ. Կ.Տ.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ «____» «____» 20____թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ. Կատարման ամսաթիվը՝ «____» «____» 20____թ.